ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/17

03.05.2017 թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),

քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247)[1] 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածներ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացիներ Համլետ Զատինյանը, Նաիրա Զաքարյանը, Ռոզիկ Կոստանդյանը, Միեր Զատինյանը, Դավիթ Զատինյանը (ներկայացուցիչ՝ Կարեն Թումանյան, այսուհետ՝ Դիմող) անհատական սահմանադրական դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 4-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Դիմողը գտնում է, որ դատարանները համայնքի ավագանուն դատարան դիմելու լիազորություններ տալով, այսինքն՝ օրենսդրությունը մեկնաբանելով այնպես, որ համայնքի ավագանին իրավունք ունի դիմել դատարան, այդ մեկնաբանությամբ խախտել են ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածը:

Դիմողի կարծիքով՝ դատարանների կողմից կատարված իրավական մեկնաբանությունները այն մասով, որ համայնքի ավագանին հանդիսանում է քաղաքացիաիրավական դատավարության սուբյեկտ և կարող է ներկայացնել հայցապահանջ, հանդես գալ դատարաններում, ունենալ դատավարական իրավունքներ և կրել դատավարական պարտականություններ, ինչպես նաև պատասխանատվություն, չի

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

համապատասխանում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Իրավական որոշակիության տեսակետից, ըստ դիմողի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերը՝ 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածները, սահմանում են դատավարական սուբյեկտներին, նրանց հասկացությունները, կարգավիճակները, իսկ հատկապես 38-րդ հոդվածով առանձին կարգավորված է համայնքների շահերը դատարանում ներկայացնող սուբյեկտի կարգավիճակը: Չնայած այդ հանգամանքին՝ այսինքն՝ այն, որ վկայակոչված իրավական նորմերը բավարար չափով հստակ են, այնուամենայնիվ, դատարանները նշված նորմերը իրավակիրառ պրակտիկայում կիրառում են այլ մեկնաբանությամբ:

Դատավարական վիճարկվող նորմերի բավարար չափով ոչ հստակ ձևակերպումների հետևանքով դատարանները իրավակիրառ պրակտիկայում նորմերը մեկնաբանում ու կիրառում են հակասահմանադրական եղանակով: Վկայակոչված նորմերը դատարանների կողմից ոչ ճիշտ կիրառելու պայմաններում ստեղծվել է հակասահմանադրական իրավիճակ՝ դատարան դիմելու սուբյեկտների և առհասարակ դատավարական իրավասուբյեկտության ընկալման, իրավական-իրավաբանաան ընկալման վերաբերյալ: Այս պարագայում քաղաքացիները չեն կարող համադրել իրենց դատավարական վարքագիծը՝ վկայակոչված դատավարական նորմերի և տվյալ նորմերի իրավակիրառ պրակտիկայի հետ:

Դատարանների կողմից կատարված նման մեկնաբանություններն այն մասով, որ համայնքի ավագանին հանդիսանում է քաղաքացիական դատավարության սուբյեկտ և կարող է ներկայացնել հայցապահանջ դատարաններում, ունենալ դատավարական իրավունքներ և կրել դատավարական պարտականություններ, ինչպես նաև կրել պատասխանատվություն, չի համապատասխանում նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի՝ իրավական պետության պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը խնդրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածները ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 4-րդ հոդվածներին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներն հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող քաղաքացիա-դատավարական դրույթների բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 2. Դատարան դիմելու իրավունքը

Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ

իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք:

Հոդված 27. Գործին մասնակցող անձանց կազմը

Գործին մասնակցող անձինք են՝

1) կողմերը.

2) երրորդ անձինք.

3) դիմողները՝ սույն օրենսգրքի երրորդ բաժնով նախատեսված գործերով:

Հոդված 29. Կողմերը

1. Քաղաքացիական դատավարության (այսուհետ՝ դատավարություն) կողմերն են հայցվորը և պատասխանողը:

2. Հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել:

3. Պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

4. Կողմերն ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են հավասար դատավարական պարտականություններ:

Հոդված 38. Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը գործին

1. Համայնքի ղեկավարն իրավունք ունի դատարան դիմել համայնքի գույքային շահերի պաշտպանության հայցով:

2. Հայց հարուցած համայնքի ղեկավարն օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները:

Քննարկվող անհատական սահմանադրական դիմումով բարձրացված հարցի լուծման առնչությամբ կարևոր նշանակություն ունեցող իրավական հարցադրումները հետևյալներն են՝

ա) արդյո՞ք համայնքի ավագանին՝ **որպես շահագրգիռ անձ,** իրավունք ունի **քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով** դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված **իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար** (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 2, մաս 1),

բ) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ որևէ այլ օրենքով նախատեսված են **դեպքեր,** երբ այլ անձանց, մասնավորապես՝ համայնքի իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք ունի **համայնքի ավագանին՝ որպես այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձ** (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 2, մաս 2),

գ) արդյո՞ք համայնքի ավագանին դատարանում կարող է հանդես գալ որպես կողմ՝ հայցվորի կարգավիճակով, **համայնքի գույքային շահերը պաշտպանելու համար** (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվածներ՝ 27, 29, 38):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ այս կամ այն սուբյեկտի՝ դատարան դիմելու իրավունքի առկայությունը պայմանավորված է վերջինիս որոշակի շահագրգռվածությամբ: Որպեսզի անձը դատարան դիմելու իրավունք ունենա, նա պետք է հանդես գա **որպես շահագրգիռ անձ:** Իսկ դատարան դիմելու շահագրգռվածությունը կախված է նրանից, թե արդյո՞ք խախտվել է են անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իրավունքները կամ արդյո՞ք առկա է դրանց խախտման վտանգ, որոնց պաշտպանության համար անձը դիմել է դատարան: Ասվածն անմիջականորեն բխում է անձի դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունից:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

…

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք…:

Սահմանադրական նշված նորմերից անմիջականորեն հետևում է, որ անձի դատարան դիմելու իրավունքը պայմանավորված է **իր** իրավունքների և ազատությունների խախտման հանգամանքով:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ **դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի **իրական և իր բնույթով լուրջ:** Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և **վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա** *(տե՛ս, Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթեմն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32):*

Վերը նշված նորմերի և դրանց մեկնաբանությունների լույսի ներքո ստացվում է, որ համայնքի ավագանին՝ որպես շահագրգիռ անձ, կարող է քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան միայն այն դեպքում, եթե կխախտվեն իր իրավունքները կամ ազատությունները կամ առկա է այդպիսի խախտման վտանգ:

Այդ դեպքում պետք է պարզել համայնքի ավագանու իրավական կարգավիճակը՝ վերջինիս իրավունքների խախտման հնարավորությունը քաղաքացիական իրավահարաբերություններում, ուստիև՝ քաղաքացիական դատավարության կարգով դատարան դիմելու վերջինիս իրավունքի բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի համաձայն՝

1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է:

2. Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի համաձայն՝

1. Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը,…:

ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի համաձայն՝

3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:

4. Համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, իրականացնում է համայնքի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը: Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

8. Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:

10. Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող և օրենքով պետական մարմիններին, կազմակերպություններին և պաշտոնատար անձանց իրավասությանը չվերապահված ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ, որոնց վերաբերյալ կազմում է արձանագրություններ …:

12. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:

Համայնքի ավագանու լիազորությունները թվարկված են օրենքի 18-րդ հոդվածում: Այդ լիազորությունների իրականացման կապակցությամբ օրենքը նախատեսում է համապատասխան դեպքերում համայնքի ավագանու կողմից որոշման ընդունման ընթացակարգ: Ընդ որում, այդ լիազորությունների բովանդակությունից հետևում է, որ բոլոր դեպքերում համայնքի ավագանին իր լիազորություններն իրականացնելիս հանդես է գալիս որպես ներկայացուցչական-իրավաստեղծ մարմին և գործում է ի շահ համայնքի:

Ինչ վերաբերում է համայնքի ղեկավարին, վերջինիս լիազորությունները թվարկված են օրենքի 4-րդ գլխում: Այդ լիազորությունների բովանդակությունը ցույց է տալիս, որ համայնքի ղեկավարը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, հանդես է գալիս որպես համայնքի, որպես իրավաբանական անձի գործադիր մարմին՝ իրականացնելով վերջինիս ընթացիկ գործունեության ղեկավարումը: Այդ լիազորությունների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում օրենքի 35-րդ հոդվածի 21-րդ կետում սահմանված լիազորությունը, այն է՝ *ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝

…

2. Համայնքների անունից իրենց գործողություններով կարող են սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Նշված քաղաքացիաիրավական նորմերից հետևում է, որ քաղաքացիական իրավահարաբերություններ սուբյեկտ է հանդիսանում համայնքը որպես իրավաբանական անձ: Համայնքի՝ որպես իրավաբանական անձի անունից էլ կարող են հանդես գալ տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Այսինքն, վերը նշված նորմերից հետևում է, որ բոլոր դեպքերում քաղաքացիական

իրավահարաբերություններում քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կրող հանդես է գալիս համայնքը, որոնք վերջինս ձեռք է բերում (ստանձնում է) իր անունից և ի շահ իրեն գործող համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի գործողությունների և որոշումների արդյունքում: Սա նշանակում է, որ համայնքի ավագանին կամ համայնքի ղեկավարը քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ չեն, այլ վերջիններս գործում են համայնքի անունից և հանդես են գալիս որպես համայնքի՝ իրավաբանական անձի ներկայացուցիչներ ի պաշտոնե: Հետևաբար, որպես շահագրգիռ անձ՝ համայնքի ավագանին կամ համայնքի ղեկավարը քաղաքացիական դատավարությունում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չեն կարող հանդես գալ անմիջականորեն իրենց խախտված իրավունքները վերականգնելու պահանջով, քանի որ վերջիններս քաղաքացիական իրավունքների կրողներ չեն, այլ այդպիսիք ձեռք են բերում համայնքի անունից և գործում են ի շահ համայնքի:

Ստացվում է, քաղաքացիական դատավարության կարգով դատարանում համայնքի ավագանին կամ համայնքի ղեկավարը կարող են հանդես գալ բացառապես համայնքի անունից՝ որպես վերջինիս իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձ, եթե վերջիններիս այդպիսի իրավասություն վերապահված է օրենքով (ՀՀ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 2, մաս 2):

Ինչպես արդեն նշել ենք, դատարանում համայնքի անունից հանդես գալու համայնքի ղեկավարի իրավասությունը սահմանված է ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածով, այնպես էլ “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 25-րդ կետով: Ի հակառակ այս կարգավորման, նշված նորմատիվ իրավական ակտերով համայնքի ավագանու համար այդպիսի լիազորություն սահմանված չէ: Նշանակում է քաղաքացիական դատավարության կարգով համայնքի անունից հանդես գալու բացառիկ իրավասություն օրենքը վերապահել է բացառապես համայնքի ղեկավարին: Ուստի, համայնքի ավագանին համայնքի ղեկավարի փոխարեն իրավասու չէ հանդես գալ քաղաքացիական դատավարությունում՝ ներկայացնելու և պաշտպանելու համայնքի քաղաքացիական իրավունքներն ու շահերը: Քաղաքացիադատավարական օրենսդրությամբ նախատեսված չէ այնպիսի կարգավորում, համաձայն որի՝ համայնքի ավագանին դատարանում կարող է հանդես գալ որպես կողմ՝ հայցվորի կարգավիճակով, համայնքի գույքային շահերը պաշտպանելու համար (ՀՀ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 27, 29, 38): Ուստի քաղաքացիական դատավարությունում համայնքի անունից հանդես գալու համայնքի ավագանու հնարավորությունը բացառված է:

Իհարկե, օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի ավագանին զրկված չէ դատական կարգով պաշտպանելու համայնքի իրավունքներն ու շահերը: Պարզապես օրենսդրությամբ այդ առումով նախատեսված է այլ՝ վարչադատավարական ընթացակարգ:

Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

14. Համայնքի ավագանու որոշումները համայնքի ղեկավարը կարող է բողոքարկել դատական կարգով:

20. Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում սահմանված է համայնքի ավագանու լիազորությունը *դատական կարգով վիճարկելու համայնքի ղեկավարի որոշումները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին:*

Նույն համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին, որի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

1.1. Հասարակական կազմակերպությունները վարչական դատարան կարող են դիմել նաև սույն օրենսգրքի 29.3-րդ գլխով նախատեսված դեպքերում:

2. Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը.

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին.

2.1) անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով.

3) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով.

4) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ սույն օրենսգրքի 29.2-րդ գլխով նախատեսված դեպքերում:

3. Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

4. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Երևանի ավագանու խմբակցությունը՝ սույն օրենսգրքի 26-րդ գլխին համապատասխան:

Վերը նշված դրույթներից հետևում է, որ համայնքի իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար համայնքի ավագանին իրավասու է դիմել վարչական դատարան, եթե գտնում է, որ, օրինակ, համայնքի ղեկավարի գործողությունների կամ որոշումների արդյունքում խախտվել է համայնքի՝ Սահմանադրությամբ, օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված այս կամ այն իրավունքը:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին, ապա այն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 73-րդ, 79-րդ հոդվածներում:

Այսպես,

Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել նաև ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածում, որի հաածայն՝

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:[1]

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:[1]

Վիճարկվող իրավակարգավորումները, կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից կասկած չեն հարուցում և լիովին բխում են Սահմանադրության համապատասխան դրույթներից: Խնդիրն առավելապես իրավակիրառ պրակտիկան է, որի Սահմանադրականությունը խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 27-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածների իրավակիրառ պրակտիկայի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան

[1] ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը: